

Նինո Պոպիաշվիլի

Իվանե Ջավախիշվիլիի անվան

Թբիլիսիի պետական համալսարան

ԵՐԿԼԵԶՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ: ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Աշխատության մեջ քննարկված են երկրորդ լեզվի և պետական լեզվի ուսուցման ռազմավարությունները:

Երբ լեզվի տիրապետման մակարդակը միատեսակ է ընտանիքի չափահաս և դեռահաս անդամների միջև, նպատակահարմար է տարիքային խմբերի փոխարեն, ինտեգրված, խառը խմբերի բաժանել նրանց, քանի որ այսպիսի դեպքում լեզու սովորելը, որպես բարդություն, որպես որոշակի հիմնախնդիր, դառնում է հեշտ հաղթահարելի: Երկրորդ լեզվի ուսուցումը խառը /ինտեգրված խմբերում չի բացառում մայրենի լեզվով հաղորդակցությունը: Համարվում է, որ երկրորդ լեզու սովորելիս, ինտեգրված խմբերում (ծնողների և զավակների խումբ) առաջանում են ընդհանուր տերմիններ, երկրորդ լեզվի ընկալման միանման պատկեր, որտեղ ընտանիքի անդամները միմյանց հիշեցնում են բառեր, արտահայտություններ, համեմատում են և վերլուծում երկրորդ լեզվի քերականական, լեզվական ասպեկտները, ինչն, ամբողջության մեջ, հեշտացնում է լեզու սովորելը:

Երկրորդ լեզուն հնարավոր է լինի այն լեզուն, որը մայրենի լեզվի յուրացումից հետո է սովորել մարդ: «Երկրորդ լեզու տերմինը կիրառվում է այն լեզվական տարատեսակությունների համար, որոնց յուրացումը ոչ թե մանուկ հասակում է տեղի ունենում, այլ՝ ավելի ուշ, այդ պատճառով, բոլոր մնացած լեզուները, բացի առաջինից (որով դեռահասը սկսում է մտածել), պետք է ընկալենք որպես երկրորդ, երրորդ և այլն լեզուներ՝ ըստ նրանց յուրացման հաջորդականության» (Գաբունիա, Էզուգբաիա, Քիրիա, 2010, էջ 29):

Պետք է նշել նաև այն, որ այսօրվա դրությամբ երկրորդ լեզուն համարվում է այն լեզուն, որն ամեն օր անհրաժեշտ է օգտագործել: Օրինակ՝ պետության մեջ, բնակելի միջավայրում, խանութում կամ ընտանիքում այն դեպքում, եթե ընտանիքի որոշ անդամներ (ծնող, բարեկամ) միայն այդ լեզվով են խոսում:

Երկրորդ լեզուն առավելագույն դեպքերում այն լեզուն է, որով խոսում են ազգային փոքրամասնությունները կամ ներգաղթյալները: Ըստ արևմտյան /եվրոպական փորձի, երկրորդ լեզուն երիտասարդ/դեռահաս ներգաղթյալի համար պետական լեզու է, քանի որ

ներգաղթյալների մեծ մասը իրենց մայրենի լեզվով են խոսում և նրանց համար ընդունող երկրի պետական լեզուն վերածվում է երկրորդ լեզվի: Որոշ երկրներում, օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որպես օրենք, ներգաղթյալ երեխաները պետական լեզվին ավելի լավ են տիրապետում, քան մայրենի լեզվին: Հայտնի է նաև, որ մոտավորապես 360-370 միլիոն մարդուց ավելի անգլերենին տիրապետում է որպես երկրորդ լեզվի: Իսկ դրա անհրաժեշտություն ստեղծում է առանձին երկրների՝ Հնդկաստանի, Պակիստանի, Նիգերիայի, Քենիայի և այլ պետությունների բազմալեզվությունը, որտեղ անգլերենը վերտարածաշրջանային, փոխհասկացնելու միջոց է հանդիսանում: Այս երկրներում անգլերենը երկրորդ պաշտոնական լեզուն է:

Երկլեզու տարածաշրջաններում, օրինակ, ինչպիսին է Հարավային Տիրոլը (Իտալիայում) երկրորդ լեզվի ուսանումը պարտադիր է դպրոցական ուսումնական պլանով (իտալական դպրոցներում՝ գերմաներեն, գերմանական դպրոցներում՝ իտալերեն):

Գերմանիայում 2005 թվականի հունվարի 1-ից, օրենքի համաձայն, ներգաղթյալներն անպայման պետք է անցնեն գերմաներենից, որպես երկրորդ լեզվից, ինտեգրման դասընթաց, քանի որ ինտեգրման դասընթացներն այլ իմաստային և գործնական կարողությունների հետ, պետք է բարձրացնեն ունկնդրի գիտելիքը երկրորդ լեզվից, այս դեպքում, գերմաներենից (Բոն, 1998, էջ 3):

Ըստ արևմտյան/եվրոպական փորձի, երկրորդ լեզվի ուսուցման մեթոդները

հայեցակարգային տեսակետից տարբերվում են օտար լեզվի ուսուցման մեթոդներից: Հայեցակարգի առանձնահատուկ լինելը կայանում է նրանում, որ երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ մեծ նշանակություն է շնորհվում մայրենի լեզվի գործոնին: Մայրենի լեզուն հանդիսանում է երկրորդ լեզվի բանալին: Հայտնի է, որ մայրենի լեզուն մարդու համար ինքնության մասերից մեկն է, միայն մայրենի լեզվով կարող է մարդ հասկանալ բարդ և իմաստային տեսակետից ծանրաբեռնված բովանդակությունը և տարիքային և զարգացմանը համապատասխան նախադասություններ և մտքեր արտահայտել:

Մայրենի լեզուն մարդու կոգնիտային զարգացման շարժիչ առանցքն է այնքան ժամանակ, մինչև այդ դերը ձեռք է բերում երկրորդ լեզուն: Համապատասխանաբար, մայրենի լեզվից երկրորդ լեզվին անցումը, երկրորդ լեզվի ուսումնասիրումը այն դեպքում նույնիսկ, երբ երկրորդ լեզվի ուսուցիչը ունկնդրի/աշակերտի մայրենի լեզվով խոսող չէ, ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ, հնարավոր է ունկնդրին առաջարկել երկու լեզուներով տեքստերի միջոցով: Տարբեր չափի և բովանդակության ինտերմշակութային բովանդակությամբ տեքստերը՝ տարիքային և լեզվի իմացության նախատեսմամբ, ուսուցման ընթացքում մեծ օգնություն են ցուցաբերում երկրորդ լեզվի ուսուցիչներին: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ ներգաղթյալների/ազգային փոքրամասնությունների ավագ սերնդի համար առանձնահատուկ նշանակություն ունի այն գործոնը, որ երկրորդ լեզուն չփոխարինի մայրենի լեզվին:

Մասնավորապես, երբ գործը վերաբերում է երեխաներին, նրանց ծնողների՝ ներգաղթյալների և/կամ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մեծ նշանակություն ունի նաև այն, որ իրենց զավակները, որոնք նույնպես սովորում են երկրորդ լեզուն/պետական լեզուն, մայրենի լեզուն ևս համապատասխանաբար իմանան: Նրանով, որ երկրորդ լեզվի ուսուցումը ընթանում է մայրենի լեզվի ասպեկտների նախատեսմամբ, որոշակի նախապայման է, որ մայրենի լեզուն ներգաղթյալի համար պահպանված պետք է լինի, կատարված է համարվում: Համապատասխանաբար, երկրորդ լեզվի ուսուցումն ավելի մոտիվացված է ընթանում:

Պետք է նշել, որ այսօրվա դրությամբ երկլեզվությունը/բազմալեզվությունը ներգաղթյալների օրինակով քննարկվում է ոչ թե որպես թերություն կամ անհամապատասխանություն, այլ որպես ինքնաձևանաչում/ինքնություն: Երեխաները շատ բան են իմանում լեզվի/լեզուների միջոցով, ունեն լեզուները համեմատելու հնարավորություն, ինչը կարող է շատերի համար հետագայում շատ հետաքրքիր լինել: Երկլեզվությունը նպաստում է լեզուների իմաստավորմանը, ինչը կարևորագույն նպատակն է երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ: Համապատասխանաբար, ժամանակակից մեթոդներում ավելի և ավելի մեծ տեղ է տրամադրվում երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ մայրենի լեզվի ասպեկտների կիրառությանը, համեմատական վերլուծությանը, համեմատական դիսկուրսներին:

Երկրորդ լեզուն, որպես մայրենի լեզվից հետո կամ նրան գուցա հեռ գտնվող

լեզու, իր լեզվական և հոգեւոցիալական ասպեկտների նախատեսմամբ, տարբերվում է այլ լեզվի, թեկուզ օտար լեզվի ուսուցման գործոններից:

Երկրորդ լեզվի և օտար լեզվի ուսուցման մեթոդները հաճախ կարող է նույնական էլ լինեն, թեպետ գոյություն ունեն նաև արմատական տարբերություններ այս երկու, տարբեր նշանակմամբ, թեպետ երբեմն միևնույն լեզվի ուսուցման մեջ: Մասնավորապես, ինչպես հայտնի է, երկրորդ լեզուն հաճախ պետական լեզուն է: Երկրորդ լեզուն փոքրամասնությունների, ինչպես նաև ներգաղթյալների համար դառնում է պետական լեզու, որում քաղաքացին ապրում է և այդ պատճառով էլ, լեզուն, բացի լեզվական-հաղորդակցական ասպեկտներից, ունի նաև այլ նշանակում, ինչպիսիք են քաղաքացու ինտեգրումը, լիարժեք ներգրավվածությունը երկրի քաղաքացիական կյանքի մեջ: Այդ պատճառով էլ, երկրորդ լեզվի ուսուցումն արմատապես տարբերվում է օտար լեզվի ուսուցումից և մեթոդական ասպեկտում ևս դրսևորում է այն լրացուցիչ բաղադրամասը, ինտեգրման անհրաժեշտությունը, որը երկրորդ լեզվի համար պարտադիր է:

Երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ նշանակալի դեր է շնորհվում տարիքին: Մասնավորապես, թե երբ է տեղի ունենում լեզվի ուսանումը՝ չափահասության, թե դեռահասության շրջանում: Այս տեսակետից տարբերվում են նաև երկրորդ լեզվի ուսուցման ռազմավարությունները:


Ըստ որոշ հետազոտությունների, սահմանված տարբերությունը առաջին և երկրորդ լեզուների միջև տարիքի մեջ է, թե երբ, որ տարիքում է յուրացվել լեզուն:

Օրինակ, Էրիկ Լենեբերգը (Լենեբերգ, 1966) երկրորդ լեզու տերմինը կիրառում է նրա սահմանման համար, թե որ լեզուն է գիտակցված ուսանվել և կիրառվել չափահասի կողմից: Առավելագույն դեպքերում բարդ է երկրորդ լեզվի կարգավիճակով նվաճել լեզվի տիրապետման այն մակարդակը, որ ունի մայրենի լեզուն:


Պետք է նշել նաև այն կարևորագույն գործոնը, որ մայրենի լեզուն, որպես հիմնարար, բազիսային լեզու իր գոյությունը այս կարգավիճակով շարունակում է երկար ժամանակ, թեպետ դեռահասների հետ կապված արդեն նկատվում են մայրենի լեզվի և երկրորդ լեզվի միջև ակադեմիական զարգացման, ակադեմիական գրագիտության սկզբից աննշան, իսկ ավելի ուշ՝ անկասկած նշանակալի տարբերություններ: Քանի որ դեռահասը ակադեմիական միջավայրում է տիրապետում երկրորդ լեզվին դպրոցում, համալսարանում, իսկ մայրենի լեզվով հաղորդակցությունը տեղի է ունենում ընտանիքում, բարեկամների հետ, նեղ ընկերական շրջապատում, մայրենի լեզվի իմացության մակարդակը որոշակի տարիքից պակասում է, և նրան փոխարինում է երկրորդ լեզուն:

Համապատասխանաբար, կարող ենք երկրորդ լեզու ուսուցանելիս, տարիքային ասպեկտի նախատեսմամբ, տեսնել երկու տարբեր պատկեր.

Երկրորդ լեզվի ուսուցումը չափահասների շրջանում



Երկրորդ լեզվի ուսանումը դեռահասների շրջանում



Երկրորդ լեզվի ուսուցումը կարելի է բաժանել մի քանի ռազմավարությունների.

Ծնողների և զավակների խումբ

Երբ լեզվի տիրապետման մակարդակը միատեսակ է ընտանիքի չափահաս և դեռահաս անդամների միջև, նպատակահարմար է տարիքային խմբերի փոխարեն, նրանց բաժանել ինտեգրված, խառը խմբերի: Տվյալ ռազմավարության հզոր կողմն այն է, որ ընտանիքի բոլոր անդամները միանման են տիրապետում լեզվին, ունեն միանման առաջադրանքներ, միևնույն տեքստերը, ինչը ստեղծում է ընդհանուր մոտիվացիա: Իսկ սա նշանակալի բաղադրամաս է լեզվի ուսանում/ուսուցման ժամանակ, քանի որ, այսպիսի դեպքում լեզու սովորելը, որպես բարդություն, որպես որոշակի հիմնախնդիր, հեշտությամբ հաղթահարելի է դառնում: Այսպիսի ժամանակ ծնողները հաճախ հարց են տալիս. Տանը կարելի՞ է մայրենի լեզվով խոսել: Երկրորդ լեզվի ուսուցումը խառը/ինտեգրված խմբերում չի բացառում մայրենի լեզվով հաղորդակցությունը: Համարվում է, որ երկրորդ լեզուն սովորելիս ինտեգրված խմբում (ծնողների և զավակների խումբ) առաջանում են ընդհանուր տերմիններ, քերականական մոդելներ, երկրորդ լեզվի ընկալման միասնական պատկեր, որտեղ ընտանիքի անդամները միմյանց հիշեցնում են բառեր, արտահայտություններ, համեմատում են և վերլուծում երկրորդ լեզվի քերականական, լեզվական ասպեկտները, ինչն

ամբողջականության մեջ հեշտացնում է լեզու սովորելը:

Ինչպան վաղ, այնքան ավելի լավ

Ինչպես հայտնի է, լեզու սովորելը վաղ տարիքային խմբում լեզուն լիարժեք կերպով սովորելու յուրօրինակ երաշխիք է: Համապատասխանաբար, երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ կարևոր ասպեկտ է լեզվի վաղ հասակում ուսուցումը: Իսկ այդ տեսակետից հնարավոր է ուսուցման ավանդական սխեման փոխվի և ստանանք՝ դեռահասը սովորեցնում է չափահասին, որտեղ զավակը՝ ընտանիքի կրտսեր անդամը, որը երկրորդ լեզվին տիրապետում է դպրոցում, երկրորդ լեզվի ուսուցման հաջորդ փուլում, օգնում է ծնողին, որը երկրորդ լեզվին տիրապետում է դասընթացների միջոցով (կիրակնօրյա, ոչ պաշտոնական, լեզվի դպրոց): Այսպիսի դեպքում լեզվական բարդությունները հաղթահարված են՝ ըստ դեռահասի փորձի, քանի որ նա ավելի հարուստ լեզվական իրազեկություններ ունի:

Տարիքային բաժանում

Երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ հնարավոր է քննարկել ինչպես ըստ լեզվի տիրապետման աստիճանների բաժանումը և ուսուցումը, այնպես էլ տարիքային բաժանումը: Չնայած նրան, որ լեզվի ուսուցման ռազմավարությունը ծնողների և զավակների միասին ուսուցման ժամանակ քննարկում է դրական բնութագրիչներ, պետք է ասել, որ որոշ դեպքերում, առանձնապես մշակութային բազմազանության

պայմաններում, ունկնդիրներին ըստ տարիքային աստիճանների բաժանելը ավելի է արդարացված: Մեծահասակների և դեռահասների խմբերի բաժանելը որոշ մշակույթներում նույնիսկ պարտադիր է, քանի որ մեծահասակների մոտ որոշակի բացասական վերաբերմունք է առաջանում դեռահասների հետ սովորելու ժամանակ, առանձնապես սենսիտիվ գործոն կարող է լինել սխալներ թույլ տալը, սխալների ուղղումը խմբի անդամի (դեռահասի) կողմից, բացատրած տեքստը կրկնելու դժվարությունը, հիշեցնելը խմբի անդամի (դեռահասի), կամ ընդհակառակը մեծահասակի կողմից՝ ծնողի /ավագի դիրքորոշումից և այլն:

Իրավիճակային ինտեգրում

«Աշխարհը միմյանց հանդիպում է մանկապարտեզում» գրքում (Վայնհայմ, 2005) նշված է, որ իրավիճակային ինտեգրումը ամենաձեռնտու գործոններից մեկն է

երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ: Համապատասխանաբար, բնական միջավայրը, հաճախակի և ինտենսիվ հաղորդակցությունը, աշխատատեղը, դպրոցը, մանկապարտեզը, խանութը ... հնարավոր է վերածվեն աճող ինտեգրման, նաև երկրորդ լեզվի ուսանման հիմնական/գլխավոր մոտիվացիայի:

Ինչ մեթոդական մոտեցումներ կարող ենք կիրառել երկրորդ լեզվի ուսուցման ժամանակ

Հաղորդակցական մեթոդը, խմբային և գործընկերային աշխատանքի մեթոդները, դերային խաղերը, որոնք հրատապ են ամենօրյա կյանքում, այդ թվում մասնակիցների հայրենիքում, տարածաշրջանային /տեղական խմբում և երկրորդ լեզվով խոսող ժողովրդի մեջ:

Մեթոդներ, որոնք նպաստում են ինքնաուսանմանը, օրինակ՝ նամակներ գրել, տեղեկությունը ինքնուրույն հայթայթել և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

- Բոն, 1998 - Ocke-Schweden Bohn, Wahrnehmung fremdsprachlicher Laute: Wo is das Problem?, im Buch: Tuebinger Beitrege zur Linguistik, Serie A: Language Development, Tuebingen, Narr, 1998.
- Բեյքեր, 2010 – Կոլին Բեյքեր, Երկլեզու կրթության և երկլեզվության հիմունքներ, չորրորդ հրատարակություն, Թբ., 2010:
- Գաբունիա, Էզուգբաիա, Քիրիա, 2010, Կախա Գաբունիա, Լալի Էզուգբաիա, Ճաբուկի Քիրիա, Լեզվական իրավիճակը ժամանակակից Վրաստանում, Թբիլիսի, 2010:
- Լենեբերգ, 1966 - Lenneberg E. H. , The national history of language, Cambridge 1966.
- Պետական լեզվի ուսուցման հարցեր, 2011. Պետական լեզվի ուսուցման հարցեր: Հիմնախնդիրներ և մարտահրավերներ, Միջազգային գիտաժողովի նյութեր, Թբիլիսի, Բաթումի, 2011:
- Ուլրիխ ..., 2005 - Ulich, M., Oberhuemer, P., Soltendieck, M. (2.Aufl. 2005). Die Welt trifft sich im Kindergarten. Weinheim und Basel: Beltz Verlag.

Nino popiashvili

Ivane Javakhishvili

Tbilisi State University

Bilingualism and state language: Approaches and Strategies

ABSTRACT

The paper presents modern approaches during the second language and state language teaching process, in particular, second language learning strategies. When the level of the second language possession is the same within young and elder members of family, it is advisable to divide language learners as a mixed group instead of age group, because in this case language acquisition is easier. Second language teaching process in the mixed/integrated group doesn't exclude communication on the native language, but it is considered that, during the second language acquisition in the integrated groups (groups included parents and children) there are common terminology, grammatical models, common perceptions of the second language, where all the members of the family are involved in the learning process and remind each other vocabulary and expressions. They make a comparison and analyze of the second language grammatical and linguistic aspects, that makes learning process pleasant in overall.